ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՀՐԱՄԱՆ

«08» հունվարի 2024թ No 47-Ա

# «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/55» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության և 2-րդ մասի պահանջները, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշման հավելվածի 26-րդ կետի 10-րդ ենթակետը, ինչպես նաև այն, որ «Վիոլետա Ֆարմ» ՍՊԸ-ն խախտել է ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները՝ հայտում ներառվող շտկված իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացված է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/55» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան.

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ Ե Մ՝

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/55» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ ներկայացրած «Վիոլետա Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 01044241, գործունեության հասցեն՝ ք. Երևան, Գյուլիքեխվյան նրբ. 4/48) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 27-ին կայացած բացման և գնահատման նիստին ընդունված որոշման համաձայն՝ ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը ստանձնում եմ ինքս:

08.01.2024

X

ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6902780100

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ДЛЯ ПРИКАЗОВ